

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ
(Ծննդյան 85-ամյակի առթիվ)*



Ալբերտ Խառատյանի հորեկյանին նվիրված խոսքը տեղին է սկսել Սողոմոն Իմաստունի «Առակներ» գրքի մեջ մեղվին տրված հետևյալ բնորոշմամբ (Մեղվի մո՛տ գնա, տե՛ս, թե ինչպիսի ջանասիրություն է գործում, որի վաստակը մատուցում են թագավորներին և տնանկներին՝ բժշկության համար: «Առակներ»– 6,8): Պատճառը պարզ է. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, վաստակաշատ պատմաբան-բանասեր, մանկավարժ, իր ընտրած գիտահետազոտական բնագավառում անմրցելի գիտնականը տարիների նվիրումով լի և անձանձիր աշխատանքով հայագիտությանն ավանդել է բազմաքանակ եղակի աշխատություններ:

Նրա՝ գիտական հետաքրքրությունների շրջանակը լայն է՝ հայ մամուլի հասարակական-քաղաքական մտքի, Օսմանյան Թուրքիայի գրաքննության, հայ գաղթախնների ուսումնասիրման պատմություններ:

Ա. Խառատյանը ծնվել է Երևանում 1939-ին, մտավորականների ընտանիքում: 1964-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և որպես հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ սկսել աշխատել Ապարանի շրջանի Ծաղկահովիտ ու Էջմիածնի շրջանի Լենուդի գյուղերի դպրոցներում: Հետագայում անցել է դասախոսական աշխատանքի: Նրա աշխատանքային գործունեության ոլորտում է եղել Հայկական Սովետական Հանրագիտարանը, ուր 1967–1973 թթ. աշխատել է որպես խմբագիր: 1973–1985 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի սեկտորում՝ որպես բաժնի վարիչ:

1972 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Զմյուռնիայի հայ պարբերական մամուլը (19-րդ 60-ական թթ.)», իսկ 1986-ին՝ դոկտորական ատենախոսություն՝ «Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840–1900)» թեմաներով: ԵՊՀ-ում համատեղության կարգով անցել է դասախոսական աշխատանքի:

2010 թ. պատմագիտության բնագավառում ունեցած մեծ ներդրման համար Ա. Խառատյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Այդ ժամանակ նա արդեն երկար տարիներ (1988 թ.) «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագիրն էր: 2017 թ. նա ԳԱԱ «Բանբեր

* Ներկայացվել է 27. XII. 2023 թ., ընդունվել է տպագրության 10. VII. 2024 թ.:

Հայագիտության» Հանդեսի գլխավոր խմբագիրն է: Այս Հանդեսն աչքի է ընկնում իր տարալեզու հոդվածների առատությամբ: Նա նաև եղել է ԳԱԱ «Գիտության աշխարհում» բազմառողջվածությունն ունեցող ամսագրի Հայագիտական բաժնի պատասխանատու խմբագիրը:

Ա. Խառատյանի կոթողային աշխատությունն է «Կոստանդնուպոլսի Հայ գաղթօջախը (XV–XVII դարեր)» (2007 թ.) մենագրությունը (471 էջ): Այն բաղկացած է 4 գլխից, որոնք ներկայացնում են գաղթօջախի կազմավորումը, Կ. Պոլսի պատրիարքությունը, սոցիալ-տնտեսական կյանքը, Կ. Պոլսի Հայ հանրությունը և օսմանյան ավատատիրական հասարակությունը: XV դ. սկսած Կ. Պոլսը եղել է արևմտահայության մշակութային կյանքի ամենամեծ կենտրոնը: Մայր Աթոռը XVI դ. սկսած՝ հատուկ ուշադրություն է դարձրել պոլսահայ գաղութի կյանքին: XVI–XIX դդ. Օսմանյան կայսրության տիրապետության ներքո գտնվող տարածքներում ապրող Հայության կյանքն աղբյուրագիտական, փաստագրական հիմքի վրա ամբողջական ուսումնասիրության բացը լրացնում է Ա. Խառատյանի այս մենագրությունը:

Պոլսահայ գաղութի XVII դարի երկրորդ կեսի Հայության կյանքի, կենցաղի, բարքերի բացառիկ աղբյուր են Երեմիա Քյոմուրճյանի աշխատությունները: Վերջինս գրել է 1660 թ. Կ. Պոլսի լայնածավալ հրդեհի մասին, որի ընթացքում Կոստանդնուպոլսի՝ 1660 տարվա ընթացքում կառուցված քաղաքի կեսն այրվել է (էջ 19): Գրքում պատկերված է Կ. Պոլսի Հայ եկեղեցու առաջնորդների և Ամենայն Հայոց կաթողիկոսների հարաբերությունները՝ հատկապես Փիլիպոս ու Հակոբ կաթողիկոսների շփումները վերջիններիս հետ: Հեղինակը գիտական շրջանառության մեջ է դրել Գաբրիել Այվազովսկու եզակի կարևորություն ունեցող Կ. Պոլսի Հայ գաղութին նվիրված երկհատոր աշխատությունը (էջ 22):

Պոլսահայ գաղութի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդել նշանավոր Մխիթարյաններ Մ. Չամչյանցը, Ղ. Ինճիճյանը, Հ. Տաշյանը: Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում» գրքում եղած Կ. Պոլսի կյանքին վերաբերող դրվագները շահեկանորեն տարբերվում են մյուս հեղինակների դիտարկումներից իրենց հայեցակետային բնույթով (էջ 27): Ամբողջովին Կ. Պոլսի Հայ գաղութի պատմությանն է նվիրված Հ. Սիրունու «Պոլիս և իր դերը (1453–1800)» ծավալուն մենագրությունը, որի ոչ գիտական ըմբռնումները կուռ տրամաբանությամբ մերժվում են Խառատյանի կողմից: Այսքան կարևոր աշխատության մեջ չեղտված ձևով առանձնացված են Կ. Պոլսի Հայ կյանքի հանգուցային խնդիրները: Գիրքը տպագրվել է Գալուստ Կյուլպենկեան հիմնարկության աջակցությամբ:

Ընդհանրապես, Խառատյանը, որը քաջ տիրապետում է ռուսերենին, ազատորեն նաև օգտվում է անգլերեն և թուրքերեն աղբյուրներից: Հատկապես ուշադրավ է ռուսերեն հանրահայտ բնագրի՝ «О Царьграде, о создании его и взятии турками в 1453 году» օգտագործումը, որի հեղինակն է համարվում ականատես Նեստոր Իսկանդերը: Վերջինս վկայում է, թե քաղաքի պաշտպանների թվում գոհվել են նաև հայեր: Թուրքերը Կ. Պոլիսը գրավելուց հետո Տրապիզոնի հարուստ դրամատեր հայերին վերաբնակեցման անվան տակ 1460-ին ուղղակի քչեցին Կ. Պոլիս, որպեսզի քաղաքը վերաշինեն: 1475-ին նույն ձևով բռնի տեղահանեցին Ղրիմի հայերին ու տարան Կ. Պոլիս: Գիտնականը մանրամասն նկարագրում է Կ. Պոլսի հայերով բնակեցվելու պատմական

փաստերը: 1602-ին ջալալիների ապստամբության հետևանքով դատարկվեց հայաբնակ Թոխատ վաճառաշահ ու հարուստ քաղաքը: Հայերը գաղթեցին տարբեր վայրեր, այդ թվում՝ նաև Կ. Պոլիս:

Գրքում կարևոր են նաև Օսմանյան կայսրության մեջ ապրող երկու քրիստոնյա ազգերի՝ հայերի ու հույների փոխհարաբերությունները, որոնք հաճախ բխվում են դավանաբանական հակասությունների պատճառով: Սակայն դրա հետ այդ երկու ազգերը դառնում են միասնական, երբ դիմակայում են օսմանյան կեղեքիչ հարկային քաղաքականությանը (էջ 363–380):

Հիանալի է, որ գրքի վերջում դրված է մենագրության առաջաբանի անգլերեն տարբերակը:

Արևմտահայ պարբերական մամուլը և օսմանյան գրաքննությունը, ըստ տարբեր ժամանակահատվածների, դարձել են Ա. Խառատյանի երկու ծավալուն մենագրությունների նյութ: Տիտանական աշխատանք է տարվել 1857-ից մինչև 1908 թվականն ընկած ժամանակահատվածի մամուլի տարբեր հրապարակումները դիտարկելու և օսմանյան գրաքննության կեղեքիչ սահմանափակումներն ու ապօրինի պահանջներն ուսումնասիրելու համար:

«Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը. վավերագրական նյութեր և ծանոթագրություններ» (Երևան, 1984) գիտաինֆորմացիոն բյուլետենը պարունակում է վավերագրական եզակի նյութեր: Վերջինիս առաջաբանում Խառատյանը ներկայացնում է ընտրված նյութերի սկզբունքային մոտեցումը. «Արևմտահայ մամուլից վերցված վավերագրերը հրապարակվում են որոշակի ընտրությամբ, որի սկզբունքն է հնարավորին չափ բացահայտել 60–90-ական թվականների նրա հասարակական բովանդակության զարգացման ընթացքը ամեն կերպ խաթարելուն ուղղված օսմանյան գրաքննության ուղեգիծը» (էջ 15): Գրքում պատկերված են վերոնշյալ ժամանակահատվածում լույս տեսած Կ. Պոլսի, Ջմյուռնիայի, Թիֆլիսի, Լոնդոնի այն բոլոր պարբերականները, որոնք լույս են տեսնում առաջադիր խնդրի վրա: Դրանք օրենսդրական ակտեր ու որոշումներ են, ազդարարություններ, խափանառիթ հոդվածներ:

1989-ին է լույս տեսել Ա. Խառատյանի «Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857–1908)» մենագրությունը, որի վերջում դրված են ուսերեն ու անգլերեն վերջաբաններ: Գիրքը լի է թե՛ փաստական և թե՛ տեսական-եղակետային նորություններով: Ուսումնասիրության մեջ բազմաթիվ օրինակներով հաստատվում է, թե որքան դժվարին է եղել Օսմանյան Թուրքիայում հատկապես երգիծական մամուլի վիճակը: Հակոբ Պարոնյանը դեռ 1880-ին նկատել է. «Արդարև, երգիծանքը կհալածե մոլիները, բայց մոլիներն ալ չեն դադրիր հալածել երգիծաբանները» (էջ 239): Հետազոտության մեջ հմտորեն ներկայացված են եվրոպական տերությունների՝ դեպի Թուրքիան ունեցած հեռահար նպատակները, որոնք, որպես կանոն, ի վնաս հայերի ու Արևմտահայաստանի են եղել: Բխմարկը պլաններ էր գծում Թուրքիայի աջակցությամբ Մերձավոր Արևելք թափանցելու համար: Գրքում պարզորոշ երևում է Միքայել Նալբանդյանի խորաթափանց միտքն Արևմտահայաստանի ճշգրիտ ու իրական վիճակը գնահատելու խնդրում: Կ. Պոլսի «Մեղու» պարբերականն արժանացել է հալածանքների և մատնության: «Ազգային թշվառություն» վերնագրով հոդվածում Նալբանդյանը ցույց է

տալիս ոչ միայն լիբերալների, այլև պաշտոնողականների դարձվածամուկությունը, ժողովրդի շահերն անտեսելը (էջ 73): «Մամուլ» պարբերականի խափանմանն ի հակադրություն՝ Կետիկ փաշայի թատրոնում ներկայացում է տեղի ունեցել, որի վերջում արտասանվել է Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը (էջ 110): Մենագրության մեջ փաստացի հիմնավորված է Նալբանդյանի՝ արևմտահայ գործիչների ու մամուլի վրա ունեցած դադափարական մեծ ազդեցությունը: Տպավորիչ է Խառատյանի գրքի հետևյալ փաստը, որը քաղված է ռուսական «Биржевые ведомости» թերթից: Տրապիզոնի անգլիական հյուպատոսից մեծ ջանքեր է պահանջվել Լոնդոնի Բրիտանական թանգարանի համար ոչնչացումից փրկել Հայոց արքա Տիգրան Մեծի հարթաքանդակը (էջ 76):

1872-ին Կ. Պոլսում հրատարակվող «Մանգումեի էֆքյար» պարբերականում տպագրվում է Բաֆֆու «Սուլը» գործը՝ ազդարարելով թուրքական և պարսկական բռնապետությունների նույնատիպ հալածանքները հայերի հանդեպ (էջ 125): Օսմանյան գրաքննության ճնշումներին ոչ մեկ անգամ անդրադարձել են Թիֆլիսում հրատարակվող «Մշակի» գործիչները՝ Գր. Արծրունին, Բաֆֆին, Մ. Փորթուգալյանը և ուրիշներ: Արծրունին արևմտահայերի համար պատրաստված սահմանադրության մեջ տեսնում էր խաբեություն: Մինչդեռ, ըստ Խառատյանի, այդ սահմանադրությունը խթանեց հայ ժողովրդի ազգային լուսավորության, մշակույթի ու հասարակական մտքի զարգացմանը (էջ 215):

Արևմտահայ իրականության մեջ «Արևելքը» համամիտ էր Գր. Արծրունու և «Մշակի» ուղեգծին ու պաշտպանում էր Թուրքիայում կապիտալիզմի զարգացմանը և Արևմտահայաստանում կապիտալիստական հողօգտագործման ձևերին անցնելը (էջ 251–252):

Կ. Պոլսի ամենաազդեցիկ պարբերականը եղել է «Հայրենիքը», և դրա համար էլ ենթարկվել է խիստ հալածանքների: Ֆրանսիայի պրեզիդենտ Կարնոյի սպանության լուրը (1894 թ.) թուրքական գրաքննությունը փորձում էր թաքցնել, որովհետև Աբդուլ Համիդը սարսափում էր նման ճակատագրի արժանանալու հեռանկարից (էջ 289):

Իր ազգային գործունեության համար հալածանքների ենթարկվեց Կ. Պոլսի պատրիարք Մկրտիչ Նիրմյանը, որը 1873-ին ստիպված հրաժարական տվեց (էջ 120): Հալածանքների է ենթարկվել նաև Հ. Պարոնյանն իր պարբերականում ծաղրանկարներ տպագրելու համար:

Արևմտահայաստանի գավառներում հայ գյուղացիների հարստահարումը հասնում է աննկարագրելի չափերի, ու եթե թերթերն այդ մասին փաստեր էին հրապարակում, ապա անմիջապես փակվում էին:

Անգլիայի կառավարության հակահայկական քաղաքականության փաստերը ևս կան գրքում. «Անգլիական մամուլը պատրաստ էր ցանկացած ձեռկերպման, միայն թե սեպ խրեր արևմտահայերի ռուսական կողմնորոշման մեջ» (էջ 205):

Գրքում հստակ ու փաստահարուստ ներկայացված է Աբդուլ Համիդի հայտայաց կերպարն ու գործունեությունը: Նրա բռնապետության տարիներին, մասնավորապես՝ 1896–1908 թթ. արևմտահայերի սահմանադրությունը գործել է զուտ անվանապես (էջ 21): Ահա Խառատյանի այդ ժամանակահատվածի

վերաբերյալ դիպուկ բնորոշումը. «Աբղուշ Համիդի օրով դեն նետվեց հետապազրական լիբերալ ծածկոցը և վերածվեց հրեշավոր ու մերկապարանոց մի գրաքննություն, որ անօրինակ էր ընդհանրապես գրաքննությունների պատմության մեջ» (էջ 92): Պարզվում է, որ Թուրքիայում սուլթան Համիդը իշխանության է եկել անգլիական կառավարության ջանքերով (էջ 164): Աբղուշ Համիդը հատուկ ատելությամբ փակում էր երգիծաթերթերը՝ դրանք համարելով հասարակական բարոյականությունը ոտնահարող հրատարակություններ: Դեռ Համիդին նախորդող սուլթան Մուրադի ժամանակ թուրքական խմբագիր և թարգմանիչ Թ. Կասաբը (ազգությամբ հույն) Մոլիերի «Ժլատը» թուրքերեն էր թարգմանել «Փինթի Համիդ» («Ժլատ Համիդ») վերնագրով: Սուլթան Համիդը, այդ կապելով իր անձի հետ, երբ եկավ իշխանության, Կասաբին երեք տարով բանտ ուղարկեց (էջ 175–176): Թուրքիայում կատարվող մամուլի սահմանափակումներն իրենց արտացոլումը գտան Հ. Պարոնյանի «Թատրոն» պարբերականում:

1995-ին է լույս տեսել Ա. Խառատյանի «Հասարակական միտքը Ջմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840–1900)» մենագրությունը: Գրքի սկզբում դրված են այն մտավորականների գործերն ու անունները, որոնք իրենց նպաստն են բերել հայ հասարակական մտքին: Դրանք են՝ Ղ. Պալազարյան, Տ. Տեսեյան, Ստ. Ոսկանյան, Գր. Ջիլինկիրյան, Մ. Մամուրյան, Գր. Մսերյան, Գ. Կոստանդյան, Հ. Սվաճյան:

Արևմտահայ մշակույթի, հասարակական մտքի, պարբերական մամուլի պատմության մեջ Ջմյուռնիայի գաղթած խորհրդավոր, իրավամբ, խոր հետք է թողել: XVII դարի առաջին քառորդից մինչև XX դարասկզբի Հայոց մեծ ցեղասպանությունը գաղթած խորհրդավոր ապրել է լիարյուն ազգային կյանքով (էջ 6): Հայերը Ջմյուռնիայում հաստատվել են, հավանաբար, Բագրատունիների հայկական թագավորության անկումից հետո XI դ.: Նրանց թիվը ստվարացել է Կիլիկիայի հայկական թագավորության անկումից և ապա Շահ Աբասի XVII դարասկզբի արշավանքներից հետո: Միայն XVII դարում 25.000 հայեր բնակություն են հաստատել Ջմյուռնիայում հատկապես Սյունիքից: XVII դարում Ջմյուռնիայի հայերը գործունե ձևով մասնակցել են Լեւոնտի երկրների առևտրին:

Մենագրության մեջ հատկապես նորովի են մեկնաբանված Ջմյուռնիայում գործող դպրոցների ու մանկավարժության խնդիրները: Ջմյուռնահայ դպրոցների առարկայական խնդիրները խստորեն քննադատել է Ա. Հայկունին, որն անգլերենի ուսուցիչ էր Ս. Մեսրոպյան վարժարանում: Նա առաջարկում էր, բացի բանասիրական առարկաներից, ուշադրություն դարձնել բնագիտական առարկաների վրա: Նկատենք, որ այս խնդիրն առաջնահերթ էր համարում Գրիգոր Մագիստրոսը դեռևս XI դարում:

Հ. Սվաճյանն էլ «Արշալույս արարատյանը» խմբագրելու տարիներին մեծապես մտահոգվել է ոչ հարուստ ընտանիքների երեխաների դպրոցն ավարտելուց հետո սպասվող ճակատագրին (էջ 293): Գրքում քննված են աշխարհաբարին անցնելու անհրաժեշտությունը, գեղագիտական միտքը զարգացնելու խնդիրները:

Ա. Խառատյանը կազմել է «Արևելյան մամուլ» և «Մեղու» հանդեսների մատենագիտությունները: Աշխատատար ու շնորհակալ գործ հետագայի

ուսումնասիրողների համար: Ինչպես նախորդ գրքերում, այնպես էլ այստեղ գետեղված են տեղեկատվական անհրաժեշտ ցանկերը:

«Մեղուի» այդ թվականների համարներում տեղ են գտել ոչ միայն հայ գրականության նշանավոր դեմքերի գործերը, այլև օտարազգի հայագետների՝ Հայաստանի պատմությանը վերաբերող աշխատությունները: Դրանց թվում է Ֆրանսիացի նշանավոր հայագետ Վիկտոր Լանգլուայի «Դատությունը Փռանսայի հետ Հայաստանի հարաբերությանը վրա՝ միջին դարուց մեջ» աշխատությունը՝ տպագրված պարբերականի տարբեր համարներում: Նույնպես տարբեր համարներում է տպագրված Վիկտոր Հյուգոյի հրապարակախոսությունը: Ինչպես երևում է, Զմյուռնիայում ներգործուն դեր են կատարել «Հյուսիսափայլը» և նրա հիմնադիրներ Ստեփանոս Նազարյանցն ու Միքայել Նալբանդյանը:

«Մեղուի» խմբագիրները հատուկ ուշադրություն են դարձրել հունական անտիկ հեղինակների չհնացող պատվիրանների վրա: Հետաքրքիր են Պլուտարքոսից կատարված թարգմանությունները, որոնք վերաբերում են հայրերի ու մայրերի դեպի զավակներն ունեցած սիրուն, հին աշխարհի ամուսնության կանոններին և այլն (էջ 30–31): «Մեղուի» հավելվածում՝ 1859 թ. ապրիլի 28-ի թիվ 11-ում, տպված է Լորիս-Մելիքյանի կենսագրությունը՝ «Հայկազուն զորապետ ռուսաց, որ արդ ի Պոլիս» խորագրով (էջ 38):

1980-ին էլ լույս տեսել Ա. Խառատյանի «Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից» գիրքը, որը, ցավոք, հրատարակվել է ռոտոպրինտ տպագրական ձևով. դա խանգարում է գրքի բովանդակության անհրաժեշտ ընկալմանը: Նրանում կա հետևյալ ուշագրավ միտքը. «Զմյուռնահայ մամուլը գերազանցապես պրոպագանդել է ռոմանտիկական գեղագիտության սկզբունքները, սակայն արժեքավորել է նաև ազգային և եվրոպական ռեալիստական ստեղծագործությունները» (էջ 189):

Ա. Խառատյանի վերջին գրքերը լույս են տեսել 2011 թ. հետո, երբ նա հնարավորություն ունեցավ այդ թվականին գիտական գործուղումով լինել Ստամբուլի հայ եկեղեցու պատրիարքարանի գրադարանում: Դրանցից առաջինը կոչվում է «Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900–1922)» (2015): Գիրքը լույս է տեսել Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյան մատենաշարով:

Հուզիչ է, որ հայրենասեր Ա. Խառատյանը հիմնարար այս գրքի համար որպես ընծայական խոսք գրել է հետևյալը. «Ի հիշատակ ցեղասպանությանը զոհ գնացած հայ սերունդների, ովքեր եղել են այս գրքում ներկայացված մամուլի ընթերցողներն ու հեղինակները»: Աշխատության առաջին գլուխը նվիրված է մինչև առաջին աշխարհամարտը լույս տեսած պարբերականներին՝ առանձին-առանձին: Գրքում լուսաբանվում են Կ. Պոլսում ու Զմյուռնիայում այդ թվականներին լույս տեսած հետևյալ պարբերականները՝ «Բյուզանդիոն» (1896–1918), «Հանրագիտակ» (1896–1908), «Սուրհանդակ» (1899–1908), «Մանգումեի էֆքյար» (1866–1913), «Արևելյան մամուլ» (1871–1909), «Մասիս» գրական շաբաթաթերթ (1900–1908), «Ժամանակ» (1908–1914), «Հայրենիք» (1891–1896, 1909–1910), «Դաշինք» (1909–1914), «Հայ գրականություն» (1911–1914), «Մարմնամարզ» (1911–1914): Իսկ

երկրորդ գլուխը նվիրված Հայ մամուլին զինադադարից հետո: Դրանք «Վերջին լուր» (1921–1922), «Արագած» (1919–1920), «Արևելյան մամուլ» թերթերն են և այլ հրատարակություններ (1919–1922):

Այս գիրքը կարդացվում է մեծ հետաքրքրությամբ: Նախ փաստ է, որ XX դ. առաջին քառորդի արևմտահայ մամուլն առանձնացված չի ուսումնասիրվել: Նրանում կան բազմաթիվ անմոռաց էջեր, որոնց ճանաչողական արժեքը չատ մեծ է: Տպագրվել են Հ. Պարոնյանի անտիպ ֆելիետոնները, որտեղ նա ծաղրել է Հայկական դպրոցների բարձիթողի վիճակը: Իրական գիտելիքներին դպրոցներում փոխարինել են կեղծ լեզվագիտությունը, աղքատամտությունը, փքուն դարձվածներով խոսելն ու գրելը (էջ 125):

Խառատյանի վերջին գիրքը կոչվում է «Զմյուռնիայի և էգեյանի առափնյակի Հայկական այլ գաղթօջախները (XVI–XIX դդ. I կես)» (2022): Այն հրատարակվել է ՀՀ ԳԱԱ Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող Համահայկական հիմնադրամի Հովանավորությամբ:

Բոլորովին նորություն է գրքի երկրորդ գլուխը՝ «Գաղթօջախը՝ էջմիածնի թեմ»: Գիտնականի տարբեր աշխատություններում կան բազմաթիվ փաստեր, որոնք ներկայացնում են թուրքական կառավարության ջանքերը էջմիածնի Մայր Աթոռից Պոլսի պատրիարքարանը հեռացնելու ուղղությամբ: Խոր վերլուծության են ենթարկվել էջմիածնական թեմ հասկացությունը, մասնավորապես «տերունի թեմ» (առաջնորդական թեմ) և «նվիրական թեմ» եզրույթները, ցույց տրվել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, ընդամին՝ հանվելով Սիմեոն Երևանցի կաթողիկոսի «Ջամբու» աշխատության տվյալների և իրողությունների վրա: Նույն կերպ, առաջին անգամ մեր եկեղեցու պատմության մեջ, Ա. Խառատյանը ճշտել է Օսմանյան Թուրքիայում էջմիածնական տերունի թեմերի վերացման տարեթիվը՝ ոչ թե 1828–1829, այլ 1821–1822, երբ Բ. Դուռը վճիռ էր ընդունել՝ վերանայելու իր փոխհարաբերությունները Պարսկաստանի տարածքում գտնվող էջմիածնի հետ:

Նոր փաստերով հարուստ է նաև երրորդ գլուխը, որը կոչվում է «Էգեյանի այլ գաղթօջախներ: Տնտեսությունն առափնյակում»:

Շահեկան է գրքի վերջում դրված հավելվածը՝ «Ճանապարհորդները Զմյուռնիայում (XVII դ. I կես–XIX դ. I կես)» (էջ 485–498):

Գիրքը նկարագարող է. կան սև-սպիտակ, նաև՝ գունավոր նկարներ: Մենագրությունը ցանկալի որակով հրատարակել է ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը 2022 թ.: Այն անվերապահորեն կարելի է համարել պատմության ինստիտուտի ձեռքբերումներից:

Ա. Խառատյանը նաև համահեղինակ է ՀՀ ԳԱԱ հրատարակած «Հայ պարբերական մամուլի պատմություն» (երկհատոր) և «Հայոց պատմություն» բազմահատորյակի առանձին հատորների որոշակի բաժինների:

Ա. Խառատյանը գրել է նաև բազմաթիվ մեծարժեք հոդվածներ, որոնք լույս են տեսել «Բանբեր Հայաստանի արխիվների», «Բանբեր Երևանի համալսարանի», «Պատմաբանասիրական հանդես»-ի, «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի, «Բազմավեպ»-ի, «Բանբեր Հայագիտության» հանդեսի և այլ պարբերականների էջերում:

Վաստակաշատ պատմաբանը դասախոսել է Երևանի պետական համալսարանում, Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական

Համալսարանում և ԳԱԱ գիտակրթական կենտրոնում: Նշենք նաև, նա ցորս ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ հասարակական մտքի և մամուլի բաժնի վարիչն է:

Ա. Խառատյանի գիտական մեծարժեք ժառանգությունն արդեն իսկ նրա կենդանության օրոք կարող է դառնալ թեկնածուական ատենախոսության թեմա:

Ցանկանանք մեծ գիտնականին քաջառողջություն ու ստեղծագործական երկարատև եռանդ:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից հայ գրականություն, գրականության դասավանդման մեթոդիկա, գրաքննադատություն, հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 36 գրքի և շուրջ 760 հոդվածի: ORCID:0000-0001-9526-9464. aelita.dolukhanyan@gmail.com